



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 փետրվարի 2025 թվականի N 207-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին  
կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի  
2025 թվականի հունվարի 24-ի «Անշարժ գույքի հասցեավորման մասին» N104-Ա  
որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման առաջին կետում  
«06-077-0003-0006» թվերը փոխարինել «06-077-0002-0006» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025թ. փետրվարի 24

ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 փետրվարի 2025 թվականի N 208-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ  
ՏԱՇԻՐ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՅԵՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ  
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ջեներալ Քեյբլ» ՓԲԸ-ի տնօրեն Հարություն Լորիկի Խանադյանի դիմումը (մուտք՝ 20/02/2025-ի ՏԴ-05-25), անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 04022025-06-0010 վկայականը, «ԿԱԴ-ԿՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 2-րդ գլխի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով և «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-397-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերում սահմանված վերջնաժամկետներում պետական գրանցման համար ներկայացված, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի գույքագրման փաստաթղթերում կա գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում արտացոլված է որպես ինքնական կառույց», նկատի ունենալով, որ ինքնական կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գ.Զահուկյան փողոց, թիվ 3 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0111-0054) «Ջեներալ Քեյբլ» ՓԲԸ-ի կողմից արդյունաբերական օբյեկտների կառուցապատման 2,93417 հա հողամասում ինքնական կառուցված՝ 586.3 քմ ընդհանուր մակերեսով արտադրամասը և 93.5 քմ ընդհանուր մակերեսով հարթակը համաձայն «ԿԱԴ-ԿՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի

կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի

2. Պարտավորեցնել ինքնական կառույցն իրականացնող «Ջեներալ Քեյթլ» ՓԲԸ-ին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (հաշվեհամար՝ 900 275 081 124) ինքնական կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝

1) Արտադրամաս 586.3 քմ ընդհանուր մակերեսով՝ 904100 (իննը հարյուր չորս հազար հարյուր) ՀՀ դրամ:

2) Հարթակ 93.5 քմ ընդհանուր մակերեսով՝ 144200 (հարյուր քառասունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Սույն որոշումից ծագող փոփոխությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025թ. փետրվարի 24

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Սարգսյանի օր  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 փետրվարի 2025 թվականի N 209-Ա

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՄԵԾԱՎԱՆ ԳՏՆԿՈՂ 06-074-0073-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ և ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Նորայր Անդրանիկի Ռաֆայելյանի (անձնագիր՝ AL0366653, տրված 01.08.2023թ.) դիմումը (մուտք՝ 19/02/2025, ՔԴ-179-25), Տաշիրի համայնքապետարանի կողմից 08 հոկտեմբերի 2023թ. տրված քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի (գրանցամատյաններ՝ 389, 391, 393) վկայագրերը, «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0,07163 հա բնակելի կառուցապատման հողամասը և որ բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գիտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և այլ որ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 1965-1985թթ-ին

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

- 1.Օրենքի ուժով ճանաչել Նորայր Անդրանիկի Ռաֆայելյանի, Արրահամ Անդրանիկի Ռաֆայելյանի, Արմեն Անդրանիկի Ռաֆայելյանի և Ռոզա Արրահամի Ռաֆայելյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0073-0001 կադաստրային ծածկագրում գտնվող 0,07163 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Օրենքի ուժով ճանաչել Նորայր Անդրանիկի Ռաֆայելյանի, Աբրահամ Անդրանիկի Ռաֆայելյանի, Արմեն Անդրանիկի Ռաֆայելյանի և Ռոզա Աբրահամի Ռաֆայելյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, Տաշիր համայնք գյուղ Մեծավան 06-074-0073-0001 կադաստրային ծածկագրում գտնվող 0,07163 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ, համաձայն ներկայացվող շինությունների բնութագրի:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2025թ. փետրվարի 25

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 փետրվարի 2025 թվականի N 210-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 120-Ն որոշումով՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0073-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Դ. Դեմիրճյան փողոց, 40 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2112) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 061323VF2V8B:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք անշարժ գույքի հասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**



2025թ. փետրվարի 25

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 փետրվարի 2025 թվականի N 211-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. 2025 թվականի մարտի 26-ին անցկացնել մրցույթ համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝
  - 1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-25), ժամը՝ 11:30.
  - 2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-28), ժամը՝ 11:30.
  - 3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-29), ժամը՝ 11:30.
2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**



2025թ. փետրվարի 25

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 փետրվարի 2025 թվականի N 212-Ա

**ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԱՆՈՒՆԻՑ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշումով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին կից «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 25-ի թիվ 3 արձանագրությունը և Մարգարիտա Էռնեստի Ավանեսյանի դիմումը (մուտք՝ 19.02.2025-ի ՔԴ181-25)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Թույլատրել Մարգարիտա Էռնեստի Ավանեսյանին իր անչափահաս երեխաներ Հայկ Հարությունի Հարությունյանի (ծնված՝ 20.05.2016թ), Մանե Հարությունի Հարությունյանի (ծնված՝ 13.03.2019թ ) և Նարե Հարությունի Հարությունյանի (ծնված՝ 26.01.2022թ) անունից որպես օրինական ներկայացուցիչ ձեռք բերել և գրավադրել ՀՀ Արարատի մարզի Արմաշ գյուղի Գործարանային փողոցի տուն 5 հասցեում գտնվող անշարժ գույքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. փետրվարի 26

ք.Տաշիր







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 փետրվարի 2025 թվականի N 213-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՂՈՒԿԵՅԱՆ ԱՐԹՈՒՐ»-ԻՆ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ  
ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԻ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ղուկեյան Արթուր» 2025 թվականի փետրվարի 26-ի N77 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 120-Ն որոշումով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, 4-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 502 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ղուկեյան Արթուր» հայտը բավարարել և նրան տալ 2025 թվականի համար հեղուկացված նավթային գազի վճարների թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. փետրվարի 27

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 փետրվարի 2025 թվականի N 214-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՂՈՒԿԵՅԱՆ ԱՐԹՈՒՐ»-ԻՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՏԱՐԱԾՔՈՒՄ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ղուկեյան Արթուր»-ի 2025 թվականի փետրվարի 26-ի N78 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N120-Ն որոշումը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, 4-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 502 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ղուկեյան Արթուր» և նրան տալ 2025 թվականի համար 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. փետրվարի 27

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 փետրվարի 2025 թվականի N 215-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐԳԻՆԵ ԱՎԴԱԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈՒՅԻՆ  
ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արգինե Ավդայան»-ի 2025 թվականի փետրվարի 27-ի N79-25 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Նորաշեն, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 41 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արգինե Ավդայան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2025 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. փետրվարի 27

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 փետրվարի 2025 թվականի N 216-Ա

**ԼԻԴԻՅԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ  
ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Լիդիյա Կիրակոսյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի փետրվարի 14-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 7.796 հա ընդհանուր մակերեսով, 06-024 0101 0045, 06-024-0101-0030, 06-024-0106-0007, 06-024-0119-0030 և 06-024-0108 0003 ծածկագրերով հողամասերը հանդիսանում են Լիդիյա Կիրակոսյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 711.809 (յոթ հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր ինը) ՀՀ դրամ, որից 459 229 (չորս հարյուր հիսունինը հազար երկու հարյուր քսանինը) ՀՀ դրամ՝ որպես ապարք, 252.580 (երկու հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2024 թվականների համար կազմում է 201 026 (երկու հարյուր մեկ հազար քսանվեց) ՀՀ դրամ:

2025 թվականի փետրվարի 14-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի փետրվարի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Լիդիյա Կիրակոսյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 21.02.2025) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Լիդիյա Կիրակոսյանի բացակայությամբ):

### **3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

1. Լիդիյա Կիրակոսյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 912.835 (ինը հարյուր տասներկու հազար ութ հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար.

711.809 (յոթ հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր ինը) ՀՀ դրամ՝ որպես 7.796 հա ընդհանուր մակերեսով, 06-024-0101-0045, 06-024-0101-0030, 06-024-0106-0007, 06-024-0119-0030 և 06-024-0108-0003 ծածկագրով հողամասերի հողի հարկ որից 459.229 (չորս հարյուր հիսունինը հազար երկու հարյուր քսանինը) ՀՀ դրամ որպես ապառք, 252.580 (երկու հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

201.026 (երկու հարյուր մեկ հազար քսանվեց) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275097021 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275001957 հաշվեհամարին:

ՎԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2025թ. փետրվարի 28

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 փետրվարի 2025 թվականի N 217-Ա

**«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-Ն ՀԵՏ «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. փետրվարի 11-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները՝ տուժանքի մասին համաձայնագրերի ձևով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ն հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/10-1» ծածկագրով պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025թ. փետրվարի 28

ք.Տաշիր





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 փետրվարի 2025 թվականի N 218-Ա

**ՄԵՆՈՒԱԶ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԳԵՂԵՑԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան**

Մենուագ Խաչատրյանը և Գեղեցիկ Խաչատրյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի փետրվարի 14 ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրապանացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 1.807 հա ընդհանուր մակերեսով, 06-100-0138-0070, 06-100-0071-0003, 06-100-0143-0087, 06-100-0144-0095, 06-100-0147-0006 և 06-100-0125-0225 ծածկագրերով հողամասերը հանդիսանում են Մենուագ Խաչատրյանի և Գեղեցիկ Խաչատրյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :



Եզված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 201.263 (երկու հարյուր մեկ հազար երկու հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 135.031 (հարյուր երեսունհինգ հազար երեսունմեկ) ՀՀ դրամ՝ որպես պայտք, 66.232 (վաթսուներեք հազար երկու հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2024 թվականների համար կազմում է 27.934 (քսանյոթ հազար ինը հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

2025 թվականի փետրվարի 14-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի փետրվարի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Մենուագ Խաչատրյանը և Գեղեցիկ Խաչատրյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 21.02.2025) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Մենուագ Խաչատրյանի և Գեղեցիկ Խաչատրյանի բացակայությամբ):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատմասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողատմասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

1. Մենուագ Խաչատրյանից և Գեղեցիկ Խաչատրյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 229.197 ( երկու հարյուր քսաներկու հազար հարյուր իննսույնյոթ) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար.

201.263 (երկու հարյուր մեկ հազար երկու հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ՝ որպես 1.807 հա ընդհանուր մակերեսով, 06-100-0138-0070, 06-100-0071-0003, 06-100-0143-0087, 06-100-0144-0095, 06-100-0147-0006 և 06-100-0125-0226 ծածկագրով հողամասերի հողի հարկ, որից 135.031 (հարյուր երեսունհինգ հազար երեսունմեկ ) ՀՀ դրամ՝ որպես ապանք, 66.232 (վաթսուներեք հազար երկու հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

27.934 (քսանյոթ հազար ինը հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության սիջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275084037 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002021 հաշվեհամարին:



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025թ. փետրվարի 28

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94  
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 փետրվարի 2025 թվականի N 219-Ա

**ԱՁՆԻՎ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ, ՀԵՐՄԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԵՎ ՄՀԵՐ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ  
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Ազնիվ Բարսեղյանը, Հերմինե Բարսեղյանը և Մհեր Բարսեղյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի փետրվարի 14-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 2.024 հա ընդհանուր մակերեսով, 06-100-0125-0037, 06-100-0144-0104, 06-100-0101-0011, 06-100-0144-0061, 06-100-0138-0129 և 06-100-0103-0037 ծածկագրերով հողամասերը հանդիսանում են Ազնիվ Բարսեղյանի, Հերմինե Բարսեղյանի և Մհեր Բարսեղյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 175.165 (հարյուր յոթանասունհինգ հազար հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, որից 117.458 (հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր հիսունութ) ՀՀ դրամ որպես վապարհ 57.707 (հիսունյոթ հազար յոթ հարյուր յոթ) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2024 թվականների համար կազմում է 28.999 (քսանութ հազար ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամ:

